№ 97 ՉՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 6

1908

ՉՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 6 № 97

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	6 դօլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 րուբլի

Նախազգուշացում

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ
Д. З. Сараджевъ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)
„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" „Т-во Г. М. Сараджевъ"
ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկետներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։

Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ." „Д. З." տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։

(օ. մ.) առ. 25—15

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ
Աւագների խորհուրդը
յայտնում է ի գիտութիւն իր անդամների, որ մայիսի 11-ին, երեկ. ժամը 9-ին, ժողովարանի ձմերային շինութեան մէջ տեղի կունենայ ընդհանուր ժողով՝ լուծելու նախընթաց ժողովում ժամանչված հարցերը և քուէարկելու ժողովարանի թեկնածուներ առաջարկված անձերին։

(ե. կ.) ա. 2—1

ՉՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ
Թիֆլ. Ժողովարանի այգում
Ս. Նշանի դպրոցի
չքաւոր աշակերտուհիների
օգտին
կը կայանայ
ՋԲՕՍԱՆՔ
„ԾԱՂԻԿՆԵՐԻ ՏՕՆԸ"
Հետևեալ ծրագրով.
1) ՎԻՃԱԿԱԽԱՂ
2) ծաղկամարտ, 3) օդամարտ, 4) ձիարշաւ, 5) օձամարտ, 6) բաղդի տակառ, 7) կարթ, 8) կօնֆէտի և այլն։
Երեկոյ. ժամը 7-ին տեղի կունենայ
ԾԱՂԻԿՆԵՐԻ ԳՆԱՑՔԸ
լապտերներով, դրօշակներով, որին կը մասնակցեն ծաղիկներով զարդարված երեխաները մինչև 10 տարեկան։
Լաւագոյն և ամենաճաշակաւոր ծաղիկներով զարդարված մանկական գլխազարդերը կարժանանան
Երկու արժէքաւոր պրէմիաների։
Երաժշտութիւն՝ եւրոպական և տաճկական։
ՊԱՐԵՐ
Սկիզբն է ժամը $3^1/_2$-ին ճաշից յետոյ
Մուտքն արժէ՝ երեխաների և աշակերտների համար 15 կ., հասակաւորների համար 30 կ.։
(շ. կ. ե.) առ. 3—3

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐՔԻՑ ԱՌԱՋ

«Մշակի» անցեալ համարում մենք ասացինք, որ գարնան առաջին լուրերը ցանքսերի մասին նպաստաւոր էին ընդհանրապէս։

Եւ միևնոյն ժամանակ նկատեցինք, որ ինքը գիւղացին և նրա տնտեսութիւնը շատ անմխիթարական վիճակի մէջ են։

Մինչև հունձը դեռ մնում է տափարակ տեղերում 1—1 և կէս, իսկ լեռնաստաններում 2—3 ամիս ժամանակ, որի ընթացքում գիւղացին պէտք է կերակրվի հին հացով, որի պաշարը հատել վերջացել է շատ տեղերում և շինականը ստիպված է դիմել գնովի հացին և կերակրվել մասամբ խոտ ու բանջարով։

Գիւղերից մեզ հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գիւղացիները վնասվել են և վնասվում են բանջարների չափազանց գործածութիւնից և որ տեղի են ունեցել բոյսերի չափազանց գործածութիւնից ստամոքսային սուր հիւանդութիւնների դէպքեր։

Մեր խմբագրատուն մտան Ղազախի գաւառից եկած գիւղացիներ, որոնք յիշեցին, որ իրանց գիւղերում տեղի են ունեցել նոյն իսկ մահվան դէպքեր քաղցած մանուկների մէջ՝ բուսեղէնի չափազանց գործածութիւնից։

Անցեալ տարվայ անբերրիութեան շնորհիւ սոսկալի վիճակ էր ստեղծված նոյնպէս տնային անասունների համար։ Նրանց մի մասը կոտորվեց սովից։ Բարձրադիր տեղերում, ուր ձիւնը երկար շաբաթներ մնաց և արօտները շուտ չը բացվեցին, տնային կենդանիների դրութիւնը դարձել էր անտանելի և ծանր, և մեզ յայտնի են ամբողջ շրջաններ, որտեղ կոտորվել է կենդանիների 10—20, իսկ տեղ-տեղ նաև աւելի տոկոս։ Այդպիսի ցուցումներ ստացել ենք մենք օրինակ Ղազախի գաւառի Չամբարակ, Բաշքենդ գիւղերի շրջանի և ուրիշ գաւառների մասին։

Այս ձմեռը սոսկալի մի ձմեռ էր մեր սարահարթերի անասնապահութեան համար։ Խոտի պակասութիւնը և ձմեռվայ չափազանց երկարատև լինելը մի աղէտալի դրութիւն էր ստեղծել գիւղական գոմերում և ձմերանոցներում։

Այժմ թէև անցաւ այդ ծանր շրջանը և արօտները բացվելուն պէս ստեղծվեցին բարենպաստ պայմաններ տնային անասունների համար, բայց գիւղական տունը պէտք է երկար սպասէ, մինչև որ այդ անասունները կը կազդուրվեն և կարող կը լինեն նաև որևէ արդիւնք բերել գիւղացու համար։

Այսպէս է իրերի վիճակը մեր գիւղերում։

Տարվայ աջող բերքը, անշուշտ, կը նպաստէ ճգնաժամի մեղմանալուն, բայց անհրաժեշտ են և շատ ուրիշ աշխատանքներ, որպէսզի գիւղը ազատվի իրան կրծող աղէտներից։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 4 մայիսի

Ի նկատի ունենալով որ դեռ շարունակվում են ռուսական սահմանագլխում Թիւրքիայի ձեռնարկած պատերազմական մեծ պատրաստութիւնների ստայօդ լուրերը, հաւաստի զինւորական աղբիւրներից հաղորդում են, որ այդ լուրերը հիմքից բոլորովին զուրկ են. ընդհակառակն, պարսկական սահմանագլխի իրերի որոշ դրութեան և Վանի վերջին դէպքերի պատճառով, զօրքերի թիւը Ռուսաստանին սահմանակից շրջանում կրճատված է մի ամբողջ դիվիզիայով, որ մասամբ տեղափոխված է պարսկական սահմանագլուխը, մասամբ Վան և նրա շրջակայքը։ Պարսկաստանին մերձ սահմանային տեղերում ներկայումս գտնվում են երկու դիվիզիաներ, որոնք բաժանված են երկու զօրախմբերի՝ մէկը, Նիզամի 17 բատալիօններով, գեներալ Ֆագիլ-փաշայի հրամանատարութեամբ, կանգնած է Պասօվի մօտերը, միւսը՝ 16 բատալիօններով, Մահմուդ-փաշայի հրամանատարութեամբ, կանգնած է Վանում և նրա շրջակայքում։ Բացի դրանից, երկու բատալիօններ և մի թնդանօթաձիգ զօրավաշտ այդ զօրամասի կազմից, գնդապետ Եավէր-բէյի հրամանատարութեամբ, իբրև առաջապահ զօրք, կանգնած են Թերգիվարում։ Վերջին ամիսներս զինւորական ծառայութեան են կանչված սկզբում Երզնկայում ծառայութեան կանչված 14 պահեստի բատալիօնները և Բաղդադի 12 բատալիօնները, որոնք փոխարինելու են Նիզամի յիշեալ բատալիօններին և հաշվելու են պարսկական սահմանագլխում գտնվող երկու զօրամասերի պահեստի զօրախմբեր։ («Հ. Գ.»)

—

«Нов. Вр.» հաղորդում է, որ Թիւրք կառավարութիւնը իր սեփական նախաձեռնութեամբ առաջարկել է մեր գեներալնի շտաբին ուղարկել երկու ռուս օֆիցերներ Էրզրումի վիլայէթը, համոզվելու որ Թիւրքական պատերազմական պատրաստութիւնների՝ Ռուսաստանի դէմ պատերազմելու նպատակով և սահմանի վրա զօրքեր կենտրոնացնելու մասին տարածված լուրերը անհիմն են։ Հաղորդելով այդ լուրը, թերթը կարծում է, որ Բ. Դրան այդ առաջարկը կընդունվի և այդ բանի համար կովկասեան զօրքերի օֆիցերներից կընտրվեն ու կուղարկվեն երկու հոգի։

—

Թէհրան, 4 մայիսի

Շահը իր ծննդեան օրվայ առիթով ազատեց երկրի բոլոր քրէական բանտարկեալներին։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 4 մայիսի

Ռուսաց դեսպանի պահանջից դրդված արձակեցին շահի կեանքի դէմ կատարված մահափորձի առիթով ձերբակալվածներից վերջին ռուսահպատակին։ Քննութիւնից երևաց, որ նա ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 3 մայիսի

Կովկասեան երկրորդ զօրաբանակի հրամանատար գեն.-ադիւտանտ գեն.-լէյտէնանտ Միշչէնկօն նշանակված է Թիւրքեստանի գեներալ-նահանգապետ, Թիւրքեստանի զինւորական շրջանի հրամանատար և սեմիրեչինսկի կօզակային զօրքի նակազնօյ ատաման։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 4 մայիսի

Որովհետև դեռ շարունակվում է պետական բանկում ահագին բանակութեամբ թղթադրամներ կուտակվել, մայիսի 2-ին բանկի խորհուրդը կրկին որոշեց գործածութիւնից հանել 35 միլիօն րուբլի, որով այժմ շրջանառութեան մէջ մնում է մօտ 1100 միլիօն րուբլու թղթադրամ։ («Հ, Գ.»)

—

Թէհրան, 4 մայիսի

Երէկ, շահի ծննդեան օրը, մէջլիսի կարգադրութեան համաձայն, մայրաքաղաքի փողոցները զարդարված էին դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառութիւն կար։ Պալատում ընդունելութեան ժամանակ դիպլոմատիական մարմնի աւագագոյն անդամ ռուսաց դեսպան Հարտվիգը շնորհաւորական ճառ արտասանեց դիպլոմատիական մարմնի կողմից։ Շահը պատասխանեց զգացված խօսքերով։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 4 մայիսի

Ներքին գործերի մինիստրութիւնը հաստատել է այն հրահանգները, որոնցով որոշվում է ոստիկանութեան և ժանդարմէրիայի զէնք գործածելու եղանակը։

Համաձայն այդ հրահանգների, ոստիկանութիւնը և ժանդարմէրիան, որ կոչված են կարգ ու կանոնը վերահաստատելու, կարող են զէնքի գործածութեան դիմել հետևեալ կանոնները պահպանելով. դիմելու ժամանակը որոշում է անկարգութիւնների դէպքում կարգադրութիւններ անող ոստիկանական իշխանութիւնը, անհնազանդներին զսպելու բոլոր հնարաւոր միջոցները սպառելուց յետոյ միայն։ Զէնքի կարելի է դիմել միայն եռակի բարձրաձայն նախազգուշացնելուց յետոյ։ Գործողութեան ձևը կախված է կարգադրողից այն պայմանով, որ հրազէն գործածվի միայն անխուսափելի անհրաժեշտութեան դէպքում, երբ ուրիշ միջոցներով անկարելի կը լինի անկարգութիւններին վերջ դնել։ Անհնազանդ ամբոխին նախազգուշացնելու համար արգելվում է հրազէն պարպել օդում կամ կրակել դատարկ փամփուշտներից։ Առանց եռակի բարձրաձայն զգուշացնելու—զէնքի դիմել թոյլատրվում է ժողովրդական անկարգութիւնների և յուզմունքների ժամանակ, ծայրայեղ անհրաժեշտութեամբ։ Ամեն միջոցներ ձեռք են առնվում, որ չը վնասվեն անկարգութիւններին ոչ մեղսակիցները։ Զէնք գործածելու իւրաքանչիւր դէպքի մասին անմիջապէս արձանագրութիւն է կազմվում, պարզելով գործի հանգամանքները, որպիսին ներկայացվում է անյապաղ նահանգապետին կամ քաղաքապետին։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 4 մայիսի

Պետական Խորհրդի ֆինանսական մասնաժողովի և Խորհրդի կողմից ամուրեան երկաթուղագծի կառուցման օրինագիծը քննելու համար ընտրված յատուկ մասնախմբի միացեալ երկրորդ ժողովը նուիրված էր գործի զինւորա-քաղաքական կողմի քննութեան։

Երկար վիճաբանութիւններից յետոյ, քուէարկութեան դրվեց—անխուսափելի է, արդեօք, երկաթուղագծի կառուցումը զինւորա-քաղաքական նպատակներով թէ ոչ։ Անդամներից 20-ը ձայն տուին յօգուտ անյապաղ կառուցման, 17-ը՝ ձայնատւութիւնից ձեռնպահ մնացին։ («Հ. Գ.»)

—

Նիժնի-Նօվգօրօդ, 4 մայիսի

Սօրմօվում, կրակի հետ անզգոյշ վարվելուց, Ասադուլայեվի նաւթահորում հրդեհ ծագեց։ Կրակն անցաւ «Մազութ» ընկերութեան նաւթահորերը և նաւթապահեստները։ Ընդհանուր վնասը 500,000 րուբլուց վեր է։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 4 մայիսի

Նկատի առնելով այն հանգամանքը, որ Բ. Դուռը մերժեց յետ գնել Էրէկլիի հանքերը, մի յատուկ մասնաժողով կազմվեց՝ ֆրանսիական պահանջները քննելու համար։ Յետագայ բանակցութիւնները վարելու են ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը և Թիւրքաց դեսպանը։ Ֆրանսիական «Մուէտ» մարտանաւը դեռ Զունգուլդակում է։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 3 մայիսի

Այսօր, սէլամլըքից յետոյ, իտալական հաւատարմատարը Բօբիլանտին ներկայացրեց սուլթանին։ Վերջինս մեծ բաւականութիւն յայտնեց ընտրութեան առիթով և խնդրեց հաւատարմատարին շնորհակալութիւն յայտնել թագաւորին։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 3 մայիսի

Ֆալիէրը և Պիշօնը չընդունեցին Մուլէյ-Հաֆիդի պատուիրակներին։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 5 մայիսի

Ռէյտէրին Թէհրանից հաղորդում են, որ մինիստր-նախագահ Նիզամ-էս-Սալթանէն և արդարադատութեան մինիստրը հրաժարական տուեցին։

Մինիստր-նախագահ կը նշանակվի ֆինանսների մինիստր Սանի-ուդ-Դօվլէն, ներքին գործերի մինիստր՝ պալատի այժմեան մինիստր Սուլթան Ալիխանը, արդարադատութեան մինիստր՝ Մուավին-ուդ-Դօվլէն։ («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 4 մայիսի

Յայտնի աւազակ Մամէդ-բէկը իր խմբով կողոպտում է Բարանդուզի շրջանի գիւղերը։

Քաղաքից դէպի հարաւ, Ուրմիա-Սալմաստ ճանապարհին և քաղաքի շուրջը վերջին օրերս կողոպտման դէպքեր չեն եղել։ («Հ. Գ.»)

—

Խարկով, 5 մայիսի

Երէկ վախճանվեց Խարկովի համալսարանի պրոֆէսոր, բնագէտ և լեզուագէտ Բէլօուսովը։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 5 մայիսի

Վաղը Ռուսաստանի վրայով Բէլօսուար է մեկնում պարսից պատգամաւոր Էգէդ-ուս-Սալթանէն՝ պատժիչ զօրամասի հրամանատարին օգնելու համար։ («Հ. Գ.»)

—

Ապրիլի 29-ին Լէնքօրանում մասնաւոր տեղեկութիւն է ստացվել, որ պարսից կառավարութիւնը ռուսաց կառավարութեան պահանջի համաձայն ապրիլի 26-ին կալանաւորել է այնչափ աղմուկ հանող շահսօվանների պարագլուխ Մամեդ Ղուլի խանին և Հաջի Աղային (ռուսահպատակ յայտնի աւազակ, որը դատապարտված էր մահվան և փախել էր տեղական բանտից) և յանձնել մեր իշխանութեան։

Ինչ վերաբերում է Մամեդ Ղուլի խանի 15 հազարանոց «բանակի» մասին տարածված լուրերին, նրանք անհիմն են։ Ականատեսների ասելով, պատժիչ զօրամասերի գրոհից նրանք կորցնելով իրանց առաջնորդին բոլորովին ուժասպառ եղած երկրի խորքերն են անցել։

Ռուսաց սահմանագլխի մօտ ընկած սահմանային հողերը մօտ 8 վերստ տարածութեամբ պատժիչ զօրամասերի ձեռքով գետնին է հաւասարեցված։

Ինչպէս ասում են, մեր զօրամասերի մուտքը պարսկական հողի վրա տեղի է ունեցել պարսից կառավարութեան համաձայնութեամբ։

Թաւրիզից ստացվող մասնաւոր նամակներից երևում է, որ այնտեղ կատարեալ անիշխանութիւն է տիրում. Թաւրիզի շրջակայքում հրոսակախմբերի արշաւանքները սոսկալի չափերի են հասել, ամենօրեայ կողոպուտները, գիւղեր աւերակ դարձնելը դարձել են սովորական երևոյթներ։

Մայիսի 8-ին այստեղ սպասում են Գրուզինսկի գնդի գալստեանը Մանգլիսից։

(«Баку»)

—

Բելօսուարից հեռագրում են «Баку» լրագրին, որ Զաֆար խանը առաջարկել է խաղաղ խօջաբէկլուեցիներին բաժանվել միւսների։ Նրա զօրախումբը բաղկացած է 500 հոգուց, որի գլխավորն է ժանդարմայի հեծելազնդի հրամանատար Զանշահ-խանը։ Խօջաբէկլուեցիները գտնվում են Խօրուզլուի սարերում։ Նրանց պատժելու համար գնում է 8000 հոգուց բաղկացած մի զօրախումբ։

—

Ղօչան, 29 ապրիլի

Այսօր լուր ստացվեց, որ երեկոյեան Թէհրանից կը ժամանէ տեղիս նախկին գաւառապետ Սուդջա-Դօվլէն. յիշեալը, լինելով թունդ միապետական, սաստիկ յուզմունք պատճառեց անջումանականներին. անջումանականներն ուղղակի բանի ուժով ժողովրդից ստորագրութիւններ են հաւաքում Թէհրան ուղարկելու, որ թէ Սուդջա-Դօվլէն չեն ուզում. մօտիկ ապագայում կը պարզվի ամեն ինչ։

Մկր. Գէորգեան

—

Քաղաքների երկաթուղային տարիֆները վերաքննող ժամանաժողովը, փոխելով գաւառական 29 քաղաքների համար սահմանված տարիֆները, պահպանել է միայն Թիֆլիսինը և Բագուինը։ («Кс.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Վաղարշապատ, 2 մայիսի

Ամսիս 1-ի գիշերը Վաղարշապատում հետեւեալ եղեռնագործութիւնն է կատարվել. վաղարշապատցի Մկրտիչ Բօյեանին իր տան մէջ սպանել են, փորը 5—6 տեղից կտրատելով, այնպէս որ սպիտակ թոքը դուրս է եկել։ Հանգուցեալը սայլապան էր և աչքի էր ընկնում իր հեզ ու «անչառ» բնաւորութեամբ. նա թողել է 7 մանր երեխաներ և կնոջը վերին ծայր չքաւորութեան մէջ։ Սպանութեան զանազան կերպ են պատմում, բայց ամենից հաւանականն այս է. երեկոյեան ժամը 10-ին, 3 «լօթիներ» մտնում են Բօյեանի տունը, ուր գինի խմելուց յետոյ ուզում են իրանց գազանային կրքերին բաւականութիւն տալ, այսինքն բռնաբարել զոհի կնոջը. այդ ժամանակ մէջ է ընկնում նրա ամուսին Մկրտիչը կնոջը պաշտպանելու նպատակով. անգութ չարագործներից երկուսը բռնում են Մկրտչին, իսկ երրորդը սկսում է դաշոյնով անընդհատ հարուածել, և, մահվան դուռը հասցնելուց յետոյ, տանում են տանից 30 ր., որը մի քանի օր առաջ ստացած է եղել տեղական բանկից, եզան ընկեր առնելու նպատակով։

Չարագործներից երկուսն արդէն բռնված են, իսկ սպանողը անյայտացել է. միջոցներ են ձեռք առնված նրան բռնելու համար. ցանկալի է ամենախիստ պատժի ենթարկել նրանց, որպէսզի տեղացի ժողովուրդը կարողանայ մի փոքր ազատ շունչ քաշել։ Այս առաջին սպանութիւնը չէ, որ տեղի է ունենում այդ «լօթիների» ձեռքով։

Թունիկ

—

Ղազանչի (Հին Նախ. գ.), 29 ապր.

Երկար անձրեւները միջոց չը տուեցին սարոտ տեղերում անջրդի գարնանացանը ցանելու, որքան հարկաւոր էր. արտերի մի մասը մնաց առանց վարի ու ցանքի, բայց ցանված աշնանացանն ու գարնանացանը լիքը բողբոջներ արձակած՝ առատ հունձ են խոստանում, եթէ զերծ մնան բնութեան արհաւիրքներից. Ջուրը այս տարի առատ է, գետերը վարարած. սարերի ձիւները, որոնք գետերի ակն են կազմում, անչափ առատ են և մինչև ուշ ամառ ջուր են խոստանում գաւառին. շինականը յուսալով սպասում է ապագայի բերքին։

Ալէքսանդր Տէր-Ստեփանեանց

—

Վիրին Շէն (Գանձ. գ.) 29 ապր.

1908 թ. ապրիլի 23-ին վախճանվեց Թիլու Տէր-Մարտիրոսեանցը՝ որի թաղումը կատարվեց ապրիլի 27-ին, կիրակի օրը։

Ներկայ էին շրջակայ գիւղերի 8 քահանայ և բազմաթիւ ժողովուրդ։

Պատարագից յետոյ քարոզ խօսեց Խորէն ք. Տէր-Մարտիրոսեանցը՝ բացատրելով ծնողների պարտքը դէպի որդիքը (ուսման մասին) և թէ որդիները դէպի ծնողները, որից յետոյ 3 եղբարք՝ տէր-Խորէն, Արշակ և Ղևոնդ Տէր-Մարտիրոսեանները իրանց մօր յիշատակին առաջիկայ սեպտեմբերին բացվելիք ուսումնարանի օգտին (նստարան գնելու համար) նուիրեցին 50 րուբլի։

Լաքին Ա. Մարտիրոսեանց

—

Զաքաթալա, 2 մայիսի

Հինգշաբթի, ամսիս 1-ին, երեկոյեան տեղական գիւղատնտեսական շինութեան դահլիճում նշանակված էր ժողով՝ կաթողիկոսական ընտրութեան մասին խորհրդակցելու համար։ Չը նայելով որ այդ մասին վաղօրօք ծանուցված էր «պատուաւոր» քաղաքացիներին ու վաճառականներին, բայց և այնպէս խորհրդակցութիւնը չը կայացաւ՝ ժողովին մի ջուխտ ու կէս մարդ միայն գալու պատճառով։

Ժողովը յետաձգվեց կիրակի, ամսիս 4-ին։

Տեղացի

—

Սամարղանդ, 26 ապրիլի

Անցեալ օրը մեր ինտելիգենտ երիտասարդութիւնը հրաւիրված էր ժողով՝ Լէօի քսան հինգամեայ յօբելեանի գրական մասի համար խորհրդակցելու։

Ուսուցիչ Ցակ. Ազարաբեանը բացեց ժողովը և հանդիսականներին ծանօթացրեց ժողովի բուն նպատակի հետ։ Ամենքը սիրայօժար կերպով որոշեցին արձագանք տալ վաստակաւոր գործչի տօնին և աշխատել որքան կարելի է նպատակայարմար և արդիւնաւոր անցկացնել այդ տօնը, թէ ունկնդիր հասարակութեան համար՝ տալով նրան առատ տեղեկութիւններ յօբելեարի գործունէութեան մասին և թէ յօբելեարի համար՝ այդ հասարակութեան նուիրատուութիւնը յատկացնելով նրա օգտին։

Համակրող

—

Ղազախ, 4 մայիսի

Կառավարութեան նպաստը մատակարարող Ղազախի կոմիտեան, գիւղացոց կազմած անկանոն ցուցակների դէմ եղած բողոքների պատճառով, այնպիսի հակասութիւնների մէջ է ընկել, որ անիծում է այն օրը, երբ ինքը յայտնեց բարձր վարչութեան, թէ գաւառումս սով կայ։ Հաշտարար միջնորդ իշխան Ճավճավաձէն և իր թարգման Առուստամ-բէկ Զաքարեանը, որոնք իմանալով գիւղերի դրութիւնը, նրանց օգնութեան համար գրեթէ ցորենի բաժանման գործի ամբողջ ծանրութիւնը իրանց վրա են վերցրել, դիմեցին իմ աջակցութեան, խնդրեցին ինձ ազդել գիւղացոց և ստուգել մի քանի սովեալ գիւղերի ցուցակները։

Ամսիս 2-ին, Աղա-Ջրի հասարակութեան ցուցակից հանվածները, թւով 40—50 հոգի, Ղազախի հրապարակում կոծելով առաջս, լաց եղան իրանց դարդը, յայտնեցին, որ իրանք ամենադառն չքաւորներ են, բայց հանված ցուցակից։

Այն րոպէին, երբ ես հարցեր էի տալիս մի բողոքաւորի, Սև-քարի տանուտիրոջ գրագիր Սահակ Մելքոնեանը, առանց մազաչափ անգամ վարանելու կամ քաշվելու բազմութեան և իմ ներկայութիւնից, կատաղաբար յարձակվեց ջախջախեց բողոքաւոր գիւղացուն, որին հազիւ ազատեցին իր ձեռքին եղող ցուցակներով սանձազերծված գրագրի ձեռքից։

Ահա թէ ինչպէս են կառավարում գիւղացիներին նման բռնակալները և թէ ինչ օրեր են քաշում նրանք աչքից ու ուշադրութիւնից հեռու ընկած խուլ գիւղերում։

Ամսիս 2-ին Ուզուն-Թալա գիւղը գնաց Թիֆլիսի Ջուլհակեանցի վարպետութիւններից մէկը. այսօր ստանալու եմ ստանօկը և ուղարկելու նոյն տեղը։ Գաւառումս նոր տեսակի արհեստանոց բանալու առաջին օրինակն է սա։

Շրջանիս սովեալ գիւղացիք ամսիս 2-ին հաւաքվել էին քաղաք, կառավարութեան նպաստն ստանալու, բայց նրանք վերադարձան ձեռնունայն։ Վերջին անգամ բաշխված 13 վագոն ցորենը սաստիկ կեղտոտ դուրս եկաւ. թէև անճարացած ստացողները խնդրեցին, որ բաժանվի, բայց կօմիսսիան համաձայն Գանձակի նահանգապետի պատասխան հեռագրի՝ մերժեց տալ այդ և պատուիրեց սպասել դրա փոխարէն սպասվող նոր ցորենին։ Մորմոքելի էր դատարկաձեռն վերադարձող ժողովրդի, մանաւանդ կանանց յուսահատ վերադարձը. 20—25 վերստ ոտքով եկել էին, ոտքով էլ յետ գնացին նրանք։

Համաձայն գաւառապետ Րէզուէ խնդրանաց, իմ հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ նպաստ բաժանող կօմիսսիայի անդամներից ոմանց կաշառք ստանալը կասկածելի է։ Թէ որքան է աջողվել ինձ ճշգրիտ տեղեկութիւններ ձեռք բերել, երաշխաւորել չեմ կարող, միայն կասեմ այսքանս, որ չորս գիւղերի վերաբերմամբ տարածված լուրերը ստուգեցի և գիւղացիք յետ ստացան իրանց վաքիլների գրպանում ուշացած այն դրամները, որոնք հաւաքել և հաւատացել էին նրանց միջնորդութեան։

Զ. ք. Ազրեսեանց

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑ

—

«Մշակի» № 65-ում Ախալցխայի հայ օրիորդաց դպրոցի ուսուցչուհի օր. Ս. Գալուչեանը բողոքել էր նոյն դպրոցի տեսուչ Ց. Իւսուֆեանի դէմ, հասարակութեան դատաստանին թողնելով տեսչի վարմունքի գնահատութիւնը։

Շահագրգռութեամբ սպասում էի ես տեսչի պատասխանին, որ, սակայն, գտայ «Վտակի» № 69-ում։

Մօտիկից ծանօթ չը լինելով գործին և ընդունելով որ երկու կողմերի էլ ասածները ճիշտ են, քանի դեռ չէ ապացուցված հակառակը, ինձ թւում է, թէ ոչ ուսուցչուհին, ոչ տեսուչը չեն կարողացել գոնէ այնքան կօրրեկտ վերաբերվել միմեանց, որ աշակերտաց մանկութիւնն առիթ չունենար ստորացած տեսնելու այն հիմնարկութիւնը, որ միշտ բարձր ու միշտ վեհ է եղել իր աչքում։

Շատ պարզ է, որ, ճակատագրական մօմենտին, երկուսի մէջ էլ՝ բաւարարութիւն չը ստացած ինքնասիրութիւնն է խօսել. կողմերից ոչ մէկը նկատի չէ ունեցել հիմնարկութեան պրեստիժը։

Խօսքը վեցերորդ դասին, աշակերտուհիների հետ ընթերցանութեամբ պարապելու մասին է,—մի բան, որ մանկավարժական ժողովը մերժել է, իբրև վնասակար բան, և որին ուսուցչուհին դէմ է գնացել, իբր թէ հանգամանքից ստիպված։

Տեսուչը մտնում է դասարան և ուսուցչուհուն առաջարկում է արձակել աշակերտուհիներին... «Նա (ուսուցչուհին) բարկացաւ, նստած տեղից վեր թռաւ, կարծես, օձից խայթված, գիրքը սեղանին խփեց ուժգնութեամբ..., չարձակեց, չը լսեց ինձ. ստիպված՝ ես արձակեցի աշակերտուհիներին»։

Իմ կարծիքն է. եթէ ուղիղ է, որ ուսուցչուհին արհամարհել է մանկավարժական ժողովի որոշումը,—առաջին յանցանքն ուսուցչուհին է գործում։

Բայց և տեսուչը չէ արդարանում, երբ, մանուկների ներկայութեամբ, վայր է զցում ուսուցչուհու հեղինակութիւնը, նրանից հաշիւ պահանջելով ու նրան հրամաններ տալով, թէև աշակերտուհիներին անհասկանալի լեզուով։

Մանկավարժական ժողովի որոշմանը հակառակելը—այն էլ՝ առաջին անգամը—այնքան մեծ յանցանք չէր, որի համար արժէնար այդքան աղմուկ բարձրացնել։

Իմ կարծիքով՝ տեսուչն աւելի խելացի կը լինէր վարված ու հեռատեսութիւն ցոյց տուած, եթէ թոյլ տար, որ միայն այդ առաջին դէպքում ուսուցչուհին իր ուզածն անէր։ Նրան կը մնար ոչ թէ բռնութեամբ աշակերտուհիներին արձակել, այլ իրողութիւնը հասցնել մանկավ. ժողովի դատաստանին։

Եզրակացութիւն.—Ուսուցչուհին յանցաւոր է, ընդհարումի առիթը տալով. տեսուչն էլ անտակտ վարվելով, կրակի վրա կրակ աւելացնելով։ Նրանցից ոչ մէկը կանգնած չէ իր կոչման բարձրութեան վրա։ Տեսուչն ու ուսուցչուհին միացած՝ դպրոցը զոհ են բերում իրանց անձնական կրքերին։

Եմմ. ք. Նազարեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Շաբաթ, ամսիս 3-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում, յօգուտ տնայնագործական ընկերութեան, աւճալեան ժողովրդային աուդիտորիայի սիրողների խումբը ներկայացրեց իշխան Սումբաթովի յայտնի «Դաւաճանութիւն» ողբերգութիւնը ռուսերէն լեզուով։

Ճիշտն ասելով, մենք փոքր-ինչ վերապահութեամբ էինք գնում այդ ներկայացման, մտածելով, որ հազիւ թէ սիրողների խումբը կարողանայ աջողութեամբ խաղալ այդ՝ հոգեբանական բաւականին դժուարին մոմենտներով լի՝ պիէսը։ Սակայն մենք սխալված էինք. եթէ չասենք ամբողջ խումբը, բայց գոնէ գլխաւորներից շատերը, իբրև սիրողներ, բաւականին լաւ տարան իրանց դերերը և չը փչացրին անսամբլը։ Իսկ օր. Ի. Քալանթարը, որ Զէյնաբի շատ պատասխանատու ու դժուարին դերն էր կատարում, միանգամայն գերազանցեց հասարակութեան բոլոր սպասելիքները։

Յարգելի օրիորդը հենց առաջին գործողութիւնից իր վրա դարձրեց հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը իր մանաւանդ լաւ և տաղանդաւոր խաղով. նա հենց առաջին րոպէից գրաւեց միւս դերակատարներից, և ամենքն էլ զգացին, որ մի աչքի ընկնող նոր ուժի հետ գործ ունեն։ Որչափ առաջ գնաց շնորհալի օրիորդը իր դերի մէջ, այնչափ աւելի ու աւելի մեծացաւ հասարակութեան հիացմունքն ու ոգևորութիւնը, որը պիէսի 3-րդ գործողութեան ժամանակ մի կատարեալ օվացիայի հասաւ։ Ինչպէս յայտնի է, այդ գործողութիւնը ամենադժուարին մասն է Զէյնաբի դերի համար. այստեղ է այն հոգեբանական բարդ մոմենտներով և էֆէկտներով լի ու ընդարձակ մոնօլօգը, որտեղ դերասանուհիները պէտք է կարողանան ցոյց տալ իրանց դրամատիքական տաղանդի չափն ու սահմանը։ Եւ օր. Քալանթարը փառաւորապէս յաղթեց մոնօլօգի բոլոր դժուարութիւնները։

Թէ այդտեղ և թէ յետագայում օրիորդը ցոյց տուեց, որ հիանալի կերպով էր ըմբռնել Զէյնաբի հոգեբանութիւնը, և շնորհիւ իր հարուստ ու մետաղեայ ձայնի, շնորհիւ իր գրաւիչ շարժումների և հարուստ միմիկայի նա շատ հեշտութեամբ էր կարողանում արտայայտել Զէյնաբի զգացմունքների բոլոր նրբութիւնները։

Թէև այս ամբողջ տարին օր. Ի. Քալանթարը խաղում էր աւճալեան աուդիտօրիայի բեմի վրա, թէև ութ օր առաջ էլ նա խաղաց արտիստական թատրոնում «Գուվերնէօր» պիէսում, բայց և այնպէս կարելի է ասել, որ այս անգամվայ խաղն էր օր. Քալանթարի իսկական դեբիւտը, որովհետև այս անգամ էր, որ նա դուրս էր գալիս թէ շատ դժուարին դերի մէջ և թէ աւելի բազմամարդ ինտելիգենտ հասարակութեան առաջ։ Եւ օրիորդի այդ դեբիւտը մի կատարեալ յաղթութիւն էր. այդ երեկոն օր. Քալանթարի տօնը կարելի էր համարել։

Ռեպօրտեօր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Սրտի կսկիծով մի անսպասելի և ցաւալի լուր ենք հաղորդում։ Մայիսի լոյս 5-ի գիշերը ինքնասպանութիւն գործեց գրագէտ և Թիֆլիսի առևտրական դպրոցի ուսուցիչ Գրիգոր Վանցեանը։ Հանգուցեալը մի նամակ է թողել, որով խնդրում է ոչ ոքի չը մեղադրել։

◆ Երեկ, մայիսի 5-ին, Թիֆլիսի 3-րդ իգական գիմնազիայի ռուսաց լեզուի ուսուցիչ Կազանը, առաւօտեան ժամը 9 և կէսին, դասերի սկսվելու ժամանակ, մտնում է դպրոցի նախասենեակը։ Նրա ետևից մտնում են նաև երկու երիտասարդ, որոնցից մէկը, հանելով ատրճանակը, կամենում է Կազանի ետևից կրակել, սակայն, մօտ կանգնած, դպրոցի ծառան խփում է չարագործի ձեռքին, որով գնդակը, վրիպելով, դիպչում է այդ պահին նախասենեակի վերջում կանգնած 8-րդ դասարանի աշակերտուհի նուխեցի Եսթէր Նասիբեանին։ Թշուառ օրիորդին անզգայ դրութեան մէջ անմիջապէս տանում են Միքայէլեան հիւանդանոցը։ Գնդակը դիպել է գլխին և խոր վէրք բացել։ Անցած մի քանի ժամ, դժբաղդ զոհը հոգին աւանդում է։ Կրակելու ժամանակ դպրոցի ծառան փորձում է ձերբակալել չարագործին, սակայն սա, կրակելով կրկին երկու անգամ օդում, ընկերոջ հետ դուրս է վազում նախասենեակից և երկուսով դիմում են փախուստի։ Ոստիկանութիւնը կասկածով ձերբակալել է երրորդ արական գիմնազիայի փակված 6-րդ դասարանի աշակերտներից երեքին։ Այս ցաւալի դէպքը մեծ յուզմունք է յարուցել ուսանողուհիների մէջ։

◆ Մայիսի 3-ին, ցերեկվայ ժամը 5-ի մօտերը, Կիպիանովսկայա փողոցի և Պրիւտսկի նրբափողոցի անկիւնում 2 անյայտ չարագործներ յարձակվել են պաշտօնատեղից (քաղաքային ապահովագրական ընկերութիւն) տուն վերադարձող Բարսեղ Բարսամեանի վրա և դաշոյնով 4 տեղից՝ գլխից, կողքից, ձախ թիկունքից և ուսից վիրաւորել են վերջինին և, 2 անգամ օդի մէջ կրակելով, անյայտացել են։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոց։ Բժշկի ասելով վէրքերը թեթև են։ Չարագործին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված։

◆ Շաբաթ օրվայ քաղաքային վարչութեան մէջ կայացած ժողովում վճռվեց հացի գները իւրաքանչիւր տեսակի ֆունտը պակասեցնել կէս կօպէկով։ Այսինքն, փռան հացի առաջին տեսակի ֆունտը, որ մինչև այժմ վաճառվում էր 5 կօպէկով, դարձաւ $4\frac{1}{2}$ կ., իսկ երկրորդ տեսակինը՝ $4\frac{1}{2}$ կօպէկից՝ 4 կօպէկ։ Թոնրի հացի ֆունտը $5\frac{1}{2}$ կօպէկից դարձաւ 5 կօպէկ։

◆ Թիֆլիսի հացթուխները լսելով որ քաղ. վարչութիւնը մտադիր է հացի նոր սակագին մշակել, ի հարկէ, պակաս գներով։ Նրանք դիմել են Թիֆլիսի նահանգապետին մի հաւաքական խնդրագրով, որով յայտնում են նահանգապետին, որ թէև ալիւրի գները իւրաքանչիւր տոպրակին պակասել է 25 կօպէկ, բայց... բայց նրանք անկարող են համաձայնել գոյութիւն ունեցող սակագինը փոխելու, որովհետև խանութները շատ թանգ են, թանգ է բանւոր ձեռքը և այլն և այլն։ Շնորհիւ վարչութեան ձեռք առած խիստ միջոցների, մսագործների շահամոլ կրքերը զսպվեցին. հաւատացած ենք, որ անշուշտ հացավաճառներինն էլ կը զսպվեն։ Ի դէպ ասենք, որ վերջին ժամանակներս ահագին քանակութեամբ ալիւր է ստացվում տեղումս։

◆ Ապրիլի 2-ին Ախալցխայում կայացել է տեղական տանտէրերի ժողովը նոր քառամեակի համար քաղաքային լիազօրներ ընտրելու։ Ժողովին նախագահել է Ախալցխայի քաղաքային աւագ Գ. Մովսիսեանը. ներկայ են եղել 104 ընտրողներ։ Լիազօրներ ընտրվել են. Բուդուղեան, Գ. Այվազեան, Ա. Մարուքեան, Կ. Ալէքօվ, Ռ. Զաթալբաշեան, Գ. Մէյթարջեան, Ա. Ղազարոսեան, Ա. Սարգսեան, Վ. Արօյեան, Ս. Մովսէսեան, Օ. Ագուլով, Գ. և Ա. Աւետիսեանները. Թեկնածուներ՝ Լազարեան, Գ. Կաանտոպուլօ, Մ. Ջմաչեվ, Պ. Անտօնեան և Մ. Զաւարզով։

◆ Մայիսի 3-ին, Մետեխի բանտում նկատել են մի փորուածք, որ տանում է դէպի Կուր գետը։ Տեղում գտել են մի քանի գործիքներ։

◆ Թիֆլիսի քաղաքային դպրոցների վարժուհիները ուսումնարանական մասնաժողովին ներկայացրել են քաղաքային տարրական դպրոցներում տեղական լեզուները աւանդելու ծրագրի իրանց կազմած նախագիծը։

◆ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ, «Հերմէս» տպարանի (որ ներկայումս փակ է) կառավարիչ Ա. Թայիրեանը հեռացված է Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների թւից։

◆ Միայն ապրիլի ընթացքում Թիֆլիսի բուսաբանական այգին այցելել են 9000 հասակաւորներ, 2000 երեխաներ և 800 աշակերտներ։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմել է էլէկտրաքարշի ընկերութեան և նրա ուշադրութիւնն է հրաւիրել այն անկանոն դրութեան վրա, որ ներկայումս տիրում է Աւճալեան ձիաքարշի գծի վրա։ Վարչութիւնը մատնանշել է, որ այդ գիծը բարձի թողնված է և անխնամ է, որով խնդրում է կարճ ժամանակամիջոցում նկատելի պակասութիւնները շտկել։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայական այն ժամանաժողովը, որ հսկում է էլէկտրաքարշի կանոնաւոր երթևեկութեան համար, էլէկտրաքարշի ընկերութեանը տուգանքի է ենթարկել—մարտի 13, 20, 21 և 27-ին սահմանված թւով վագոններ գծերի վրա չը հանելու համար—225 րուբլի, մարտի 1-ից մինչև 26-ը—390 րուբլի, 1907 թ. սեպտ. 1-ից մինչև հոկտ. 1-ը որոշած ժամանակից առաջ երթևեկութիւնը դադարեցնելու համար՝ իւրաքանչիւր օրը 600 րուբլի, որով ընդամենը դրված տուգանքը անում է 15,255 րուբլի։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսեցի Դաւիդ Միրիմանօվ և պարսկահպատակ Սողոմոն Միանոսեան, իբրև վնասակար անձինք, աքսորվում են Օրէնբուրգի նահանգը զինւորական դրութեան ամբողջ ժամանակ։ Նաև փակված է Դաւիդ Միրիմանօվի պանդոկը, որ գտնվում է Ցխնէթսկայա և Կազբէկսկայա փողոցների անկիւնում։

◆ Թիֆլիսի Մետեխի բանտում վերջին օրերս նկատվեցին բծաւոր տիֆի 17 և փորհարինքի 4 դէպքեր, որոնցից մէկը վերջացաւ մահով։ Ինչպէս ասում են, այդ հիւանդութիւնները երևացին այն օրից, երբ Քութայիսից Մետեխի բանտը փոխադրեցին 32 բանտարկեալների։

◆ Այսօր, Թիֆլիսի ժողովարանի ամառային շինութեան մէջ, ս. Նշանի դպրոցի չքաւոր աշակերտուհիների օգտին նշանակված է մեծ զբօսանք հետաքրքրական ծրագրով։ Այդ դպրոցն էլ, մեր միւս ծխական դպրոցների նման, նիւթական շատ մեծ կարիք է զգում։

◆ Ստացանք Փ. Ա. Ֆալբորկ «Ընդհանուր կրթութիւնը Ռուսաստանում» ռուսերէն լեզուով գիրքը, 212 էջ, գինը 1 րուբլի։ Այս գրքի մասին մենք կը խօսենք առանձին։

◆ Ինչպէս հեռագրում են Թիֆլիսից «Г. M.» լրագրին, իբր թէ «Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովը այսօր մտադիր է մեկնել Պետերբուրգ»։ Միաժամանակ «Каспій» լրագիրը հաղորդում է, որ մայրաքաղաքի լրագիրների ասելով Փոխարքան այլ ևս չի վերադառնայ Կովկաս։

◆ Ռուսաց սինօդը յարգել է վրաց իմերէթեան սինօդական գրասենեակի ծառայողների խնդիրը և կարգադրել է ամեն տարի 6000 րուբլի յատկացնել նրանց ռոճիկները աւելացնելու գումարը ծածկելու համար։

◆ Վրաց-իմերէթեան սինօդական գրասենեակին կից հաստատվելու է փոխադարձ օգնութեան գանձարկղ գրասենեակի և եզարխի դիւանատան պաշտօնեաների համար։

◆ Չեռնոմորի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել, որ թոյլատրվի այս տարի գումարել Չեռնոմորեան նահանգի գինեգործների և խաղողի այգետէրերի հերթական համագումար։

◆ Ն. Տէր-Աբրահամեան դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրելով իրաւունք տալ աւտոմոբիլների հաղորդակցութիւն հաստատել Երևանեան հրապարակից մինչև Մետեխի բերդը և Երևանեան հրապարակի և Ֆունիկուլեօրի ստորին կայարանի միջև։

◆ Գանձակի նահանգական դատարանի արխիվից, մօտ օրերս, անյայտ մարդիկ գողացել են 24 հրացան։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մայիսի 3-ին, ցերեկվայ ժամը 4-ին, Բօտանիկական այգու ներքևում, ձորի վերևի մասում, 10 տարեկան Միք. Սարգսեանը և 12 տարեկան Նահապետ Նահապետեանը գառան համար խոտ քաղելիս անզգուշաբար ընկել են ձորը, մարմնի մի քանի մասերից ջարդուածքներ ստանալով։

◆ Մայիսի 4-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Միքայէլեան փողոցում Մարկինի տանը պարսկահպատակ Բաղալը (Ազամի որդի) կնոջ հետ կռուելիս՝ դանակով 4 տեղից վիրաւորել է վերջինին։ Վիրաւորվածին տարել են հիւանդանոց։

◆ Մայիսի 3-ին, Մանթաշեվի քարվանսարայում, Խաչատուր Ամիրաղովի խանութից անյայտ մարդիկ գողացել են 290 րուբլի։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն շրջաբերական կարգադրութեամբ առաջարկել է տղայոց և աղջկանց դպրոցների վարիչներին, համաձայն ծնողական խորհուրդների յարուցած միջնորդութեան, միջոցներ ձեռք առնել թոյլ չը տալու դպրոցական սաներին ներկայ գտնվել հակաբարոյական և բարոյական տեսակէտից կասկածաւոր ներկայացումներին ու հանդէսներին։ Միևնոյն ժամանակ Փոխարքան, բացի ոստիկանութեանը տուած կարգադրութիւնից, հրամայել է «վերահսկողութեանը մասնակից անել նաև ուսումնարանական վարչութեանը»։

◆ Դումայի ձայնաւորներին յիշեցնելու համար ուղարկված են քաղուածքներ օրէնսգրքից այն պատիժների մասին, որին ենթարկվում են առանց յարգելի պատճառների նիստերին չը մասնակցող ձայնաւորները։

◆ Մարտին կայացել է Բագուի միջնակարգ տեխնիքական դպրոցի առաջին շրջանաւարտ աշակերտների արձակումը։ Մինչև 1905 թ. յունվար ամիսը Բագւում կար միայն տեխնիքական ստորին դպրոց. այդ ժամանակ դարձաւ միջնակարգ չորսամեան՝ երկու մասնագիտական բաժանմունքով մեքենայական և շինարարական, որոնք վայելում էին միջնակարգ դպրոցների արտօնութիւնները։ Այս տարի մեքենայական ղաժանումը սպանել են 22 հոգի, որոնցից 5 հայեր, իսկ շինարարական մասը՝ 9 հոգի. երկուսը հայեր։

◆ Տեղական վաճառականներից մէկը քաղաքացիական պահանջ է յարուցել հաշտարար դատարանի նախկին քարտուղար Ալէքսանդր Ասկերովի դէմ իր մագազինից զանազան ժամանակներում վերցրած ապրանքների համար։ Ներկայումս երբ հարկաւոր է եղել այդ գործը, պարզվել է, որ նահանգական դատարանից գողացված է։ Պահանջի գումարը հասնում է 15,000 րուբլու. Այդքան գումարի նա տարել է ապառիկ թանգագին քարեր և բրիլեանտներ։

◆ Մայիսի 3-ին Բալախանիում եղբ. Միրզոյեւների 50-րդ մասի նաւթահանքի մօտ երեք անյայտ չարագործներ յարձակվում են Արզիւլ Օմար-օղլի լեզգու վրա և, «բուկի վերև» հրամայելով, խլում են մօտը եղած 300 րուբլին և փախուստ տալիս։ Գորոդովոյները հետամուտ են լինում էքսպրոպրիատորներին բռնելու և երկու անգամ ապարդիւն գնդակ արձակելուց յետոյ՝ վերադառնում են ձեռնունայն։

◆ Մայիսի 3-ին Բոնդարնայա փողոցում ատրճանակի գնդակներով տեղն ու տեղը սպանված է տեղական ազդեցիկ և հարուստ Թուրքերից մէկը՝ դումայի ձայնաւոր Հաջի Բաբա Աշուրօվը։ Երբ ոտով անցնում էր փողոցից, նրա վրա սկսեցին գնդակներ արձակել, որոնցից մէկը միայն դիպչում է ուղղակի կրծքին և խփում էլ մահացնում։ Թէ որտեղից և քանի հոգի են եղել կրակողները, յայտնի չէ դեռ։ Ինչպէս ենթադրում են, սպանութիւնը կատարված է վրէժառութեան հողի վրա։ Աշուրովը, ինչպէս յայտնի է, տեղական Թուրքերի մէջ յայտնի երկու ազգակից, իրար հակառակ, Թայֆաներից մէկի պարագլուխն էր։ Այդ լաւ զինված Թայֆաների յաճախակի ընդհարումները սպառնում էին խոշոր դժբաղդութեան պատճառ դառնալ. բարեբաղդաբար երկու կողմերի մէջ աջողվեց հաշտութիւն կայացնել և երկու տարի է մօտ, որ խաղաղութիւնը այլևս չէր խանգարվում։ Սպանվածի մօտ եղած իրերը՝ ժամացոյցը, թղթերը և մուրհակները տարված չեն։ Սպանողները բռնված չեն և յայտնի էլ չեն թէ ոստիկանութեան և թէ Թուրք հասարակութեան։ Վերջինս արտակարգ կերպով զբաղված է այդ սպանութեան գործով և խիստ կերպով դատապարտում է այդ փաստը։

(«Баку», «Каспій»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Արտակարգ մասնաժողովը, որ բաղկացած է եղել 70 հոգուց, որոնց թւում՝ դատաստանական քննիչը և էքսպերտները, քննել է պետական բանկի Պետերբուրգի գրասենեակի փոխատու-խնայողական բաժնի մէջ հաշւապահ Սմիրնովի և գանձապահի օգնական Սօկոլովի միջոցով կատարված զեղծումների գործը։ Արդէն հաստատված է, որ վերջիններս կատարել են 1274 գողութիւններ և 300 կեղծիքներ։ Վատնված գումարները համարվում են 274,000 րուբլի։ («Русь»)

◆ Ելիսավետգրադի գաւառի Նօվօ-Ալեկսանդրովկա գիւղում պատի վրա խաչված են գտել նոյն գիւղի բնակիչ Սմիկօլուբին։ Այդ դէպքի անհաւատալի թուալը հարկադրել է տեղական լրագիրներին զգուշութեամբ վերաբերվել դէպի այդ լուրը։ Սակայն ստացված պաշտօնական տեղեկութիւնները հաստատում են, որ այդ չարագործութեան փաստը ուղիղ է։ Ինչպէս պարզված է, յանցաւորները ինը հոգի են եղել. Նրանցից երկուսը դրսում պահապան են կանգնել, իսկ միւսները պատուհանից ներս են մտել Սիդոր Սմիկօլուբի տունը և կատարել այդ չարագործութիւնը։

◆ Պետերբուրգի ոստիկանութիւնը խիստ կերպով որոնում է ռուսերէն լեզուով հրատարակվող «Հարստանալու ճանապարհը» թերթի խմբագրութեան բնակարանն ու ամբողջ կազմը, որովհետև վերջինս բաւարարութիւն չէ տուել իր բաժանորդներին։ («Св. М.»)

◆ Պետերբուրգի մի քանի խոշոր լրագիրների յանկարծակի դադարելը փողոց է նետել լրագրական բազմաթիւ ծառայողներ՝ ռեպորտերներ, կորրեկտորներ և այլն։ Նրանց օգտին մտադիր են համերգ տալ։

◆ «Рѣчь» լրագրի խմբագիր Իւ. Բակի մահից յետոյ յիշեալ թերթի գոյութիւնը ապահովված է արդէն։ «Соврем. Слово» լրագիրը, որ միացնում է չորս լրագիրների՝ «Столич. Почта», «Наша Газета», «Реформа» և նախկին «Соврем. Слово», կանցնի նոր մարդու ձեռք։ Խմբագրութեան կազմը առաջվանը կը լինի։ («Св. М.»)

◆ Ռուս բանաստեղծ Կուզմինը պօռնօգրաֆիայի համար դատապարտված է մի ամսվայ կալանաւորութեան։

◆ Հաղորդում են, որ զինւորական իշխանութիւնը ուշադրութիւն է դարձրել այն երեւոյթի վրա, որ վերջին ժամանակներս ընդհանրապէս շատացել են օֆիցերների անձնասպանութեան դէպքերը։

◆ Գեներալ-մայոր Ժիրկեվիչի հաւատարմատարը գանգատ է ներկայացրել Սմոլենսկի նահանգական դատարանին՝ պատասխանատւութեան ենթարկելով «Россія» լրագրի խմբագիր Ժիվօտովսկուն և աշխատակից Ելիշեվին այն մեղադրանքների համար, որ նրանք թոյլ էին տուել եկեղեցական պատմական թանգարանի կողոպտման առիթով։ («Р. Ст.»)

◆ Ապրիլի 27-ին Պետերբուրգում գտնվող I Պետական Դումայի անդամները տօնեցին նրա բացման երկամեայ տարեդարձը։ Նրանք, թւով 64 հոգի, հաւաքվեցին Դոնօնի մօտ ընկերական ճաշկերոյթի։ Ճաշին ներկայ էին սահմանադիր-ռամկավարները, խաղաղ վերանորոգչականները և 10 հոգուց աւելի ձախակողմեան ֆրակցիայի անդամներ։ Ճաշկերոյթը անցքի էր ընկնում մտերմական և աշխոյժ բնաւորութեամբ։ Բազմաթիւ ճառեր արտասանվեցին։ («Р. В.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խանքենդ, 9 ապրիլի

Անցեալ յունվար ամսից Ղարաբաղի հայոց կոնսիստորիան ինձ նշանակել է թեմի գործակալների և եկեղեցական գործերի վերահսկող։ Սկսելով իմ պաշտօնավարութիւնը, ակնյայտնի դարձան քստմնելի արարքներ։ 17 գիւղում երևան հանվեցին 200 ծածուկ կատարված պսակներ և էջմիածնի աթոռին հասանելիք 1480 րուբլու գողումը։ Այս դեռ 17 գիւղումն է. տեսէք թէ թեմի միւս գիւղերում, հեռաւոր ծայրերում որքան կը լինեն այդպիսի ծածուկ պսակներ և գողված աթոռի հասանելիք գումարները։ Ամեն մի քայլում ինձ պատահում են գողումներ աթոռապատկան, վիճակային և թեմական դպրոցին հասանելիք գումարների։ Այսպէս հետզհետէ պակասելով տրվող նպաստները փակվել են մեր միակ թեմական դպրանոցի V և VI դասարանները, էջմիածինը և ճեմարանը ընկել են հոգեվարք վիճակի մէջ։

Եթէ ես սկսէի քննել թեմի եկեղեցական գործերը, դիցուք 15 տարվանը, այն ժամանակ քահանաները և գործակալները եթէ ծախէին իրանց բոլոր եղած չեղածը և վճարէին՝ դարձեալ ապառվել, մաքրվել չէին կարող, որովհետև գողումը սաստիկ ծանր է և սարսափելի։ Ես որոշեցի քննել 1904—1908 տարեշրջանի գործերը, որից 17 գիւղում երևաց 200 ծածուկ կատարված պսակ և 1480 րուբլու աթոռահասի գողումը։ Կազմեցի արձանագրութիւն և այդ քահանաներին ենթարկեցի պատասխանատւութեան իրանց այդ տեսակ հակաօրէն գործողութեան համար։ Ինը բոլոր արձանագրութիւններն ինձ մօտ և այս մասին կոնսիստորիային ոչ մի զեկուցում չարած, ես պօստով Շուշուց ստանում եմ այսպիսի մի նամակ։

Նախազգուշացում

Տէր-Պետրոսին.

«Ձեր նոր պաշտօնի կատարած գործերը համարվում է դաւաճանութիւն, որի գործակատարը նոր երիտասարդական օրէնքով ենթարկվում է տերրորի։ Եթէ քեզնից կը ծագի մի որևէ դաւաճանական գործ դէպի ձեր եղբայրները, վաղ թէ ուշ կենթարկվէք մահվան. կարգադրում է ձեզ ընկերութիւնը ոչինչի պատճառ չը լինել, հակառակ դէպքում ձեր գերդաստանը վաղ թէ ուշ կը մնայ անխնամ վիճակի մէջ, ուստի զգուշացնում ենք»։

«Ընկերական միութիւն»

Նամակը գրված է տառասխալներով և գրողը անկարողացել է տառերի միաձևութիւն պահպանել։

Ինձ միանգամայն զարմացնում է այդ նամակը իր բովանդակութիւնով։ Եթէ արդարև այդ նամակը գրել է նոր հովերով սնված ու զարգացած երիտասարդական մի միութիւն, միթէ նրանց «նոր երիտասարդական օրէնքը» խրախուսում է գողութիւնը, օտարին պատկանող գումարների սեփականացումը. չեմ կարծում. իսկ եթէ այո, ապա ժամանակ ինչպէս անել, որ բացվեն Շուշու թեմական դպրանոցի V և VI դասարանները և միակ ճեմարանն ազատել հոգեվարքից և լրիւ ու կանոնաւոր ժողովվեն այդ հիմնարկութիւններին հասանելիքները. խնդրեմ ցոյց տաք աւելի կանոնաւոր ճանապարհ։ Ես կասկածանքի մէջ եմ, որովհետև, ինչպէս ասացի, չեմ կարծում, որ մի որևէ փոքր ի շատէ զարգացած երիտասարդական միութիւն իրան թոյլ տայ խրախուսել և հովանաւորել գողութիւնը և անարդարութիւնը և իմ արդար ու անաչառ գործողութիւնը անուանել դաւաճանութիւն։ Արդ խնդրում եմ, եթէ այդ նամակը իսկապէս գրել է Շուշու «երիտասարդական ընկերական միութիւնը», թող ինձ միամտութիւն գրի, նամակս հրատարակվելուց 10 օր անցած, իսկ եթէ ոչ, այն ժամանակ ես հրապարակով կը յայտնեմ, թէ այդ նամակի հեղինակը մի քահանայ է, որ թաքնվել է «ընկերական միութեան» անուան տակ։

Մօտ ապագայում ես կը գրեմ մի յօդուած, թէ ինչ կարգ ու կանոն էր տիրում մեր կոնսիստորիայում նախկին արձակված կազմի օրօք, ինչպէս էին ժողովվում հոգևոր հասոյթները և որոնց գրպանները մտնում։

Պ. ք. Տէր-Յովհաննիսեանց

—

Թիֆլիս, 4 մայիսի

Տնայնագործական ընկ. օգտին արտիստիկ. ընկ. թատրոնում երեկվայ ներկայացման օր. Իզաբելլա Քալանթար, իշխ. Սումբատովի «Դաւաճանութիւն» պիեսի մէջ, Ջէյնաբի դերում, կատարեալ համոզեց ինձ և տուեց յոյս, որ հայ թատրոնն էլ կարող է մրցել ռուսական լաւ խմբի հետ և նրան հաւասար բարձրութեան վրա կանգնել։

Ներկայումս չեմ կարող տպաւորութիւններս, զգացմունքներս և հիացմունքս այսօր արտայայտել. առ այժմ շտապում եմ շնորհաւորել հայ բեմի ապագայ անպայման աստղ օր. Իզաբելլա Քալանթարին և, հիացմանս իբրև նշանակ, օրիորդին մատուցանելիք ծաղկեփնջիս փոխարէն, ներփակեալ ուղարկում եմ հինգ րուբլի, խնդրելով յանձնել տնայնագործական օգտակար ընկերութեան։

Տ. Նազարեան

—

Կրասնովոդսկ, 25 ապրիլի

Մեր ձեռքով փոխադրված 17 ր. 40 կ. գումարը, որի մասին տպագրված էր «Մշակի» № 80-ի մէջ, մենք հանգանակել ենք Սերգէյ Խանզադեանցի ընկերութեան տան պատահած խնճոյքում։ Նուիրատուների ցուցակը հետևեալն է. Խ. Լալայեանց՝ 2 ր., Բ. Փարսադանեանց, Ս. Մելիք-Յովսէփեանց, Ի. Հայրապետեանց, Հ. Մանուչարեանց, Ա. Դադայեանց և Ալէքսան Թամրազեանց (վերջինս Առաքել գիւղացի)՝ մէկական րուբլի, Մ. Օհանեան, Ս. Պօղոսեան, Ն. Մալեանց, Ա. Սաֆարեանց, Ա. Դադայեանց, Ս. Մաշուրեանց և Խ. Զաղայեանց՝ 50-ական կոպէկ, Խ. Մելիք-Յովսէփեանց, Բ. Տէր-Յարութիւնեանց, Ա. Մէժլումեանց՝ 40-ական կոպէկ, և Սերգէյ Խանզադեանցի ընկերութիւնից՝ 5 րուբլի, որպիսի գումարից դուրս ենք եկել փոխադրութեան ծախքը։ Յայտնում ենք այդ մասին ի գիտութիւն նուիրատուների։

Խ. Լալայեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. ԲՐԻՆԴԱՐԻՆ *)

(Նամակ խմբագրութեան)

Մոսկվա, 4 փետրվարի

Մի անգամ ևս կրկնում եմ, որ նամակ-հերքումս ստացվեց ինձանից մածնին սև կոչելու պայմաններում։ Վերջապէս հասկացէք ինձ, եթէ հասկանալու ընդունակութիւն ունէք։

Եւ թող Բրինդար և ընկ. չը հրճեն իրանց գործած սխրագործութիւնների համար. այո, թող նրանք չը հպարտանան, քանի որ իրանց կուսակցութեան չը պատկանող «Թերթի թղթակցի» բերանին կողպէք դնելու սովորութիւնը նրանց սիրած փէշակն է։ Ընթերցողը գիտէ, որ այդ նոյն «խուժանապետներն» էին, որ Շուշում, իրանց ժողովներից մէկում, տեղական հրամանատարը ապտակեց պ. Պօղ. Զաքարեանին՝ նրա «Մշակում» զետեղած մի փոքրիկ նամակի համար, որտեղ հեղինակը ի միջի այլոց ասել էր. «Ղարաբաղի թեմը իր անզօր շլինքին փաթաթած Աշոտ եպիսկոպոսը և այլն» խօսքերը։ Պ. Լ. Յովսէփեանին ևս ստիպեցին հերքել իր մի թղթակցութեան գլխաւոր կէտը։ Եւ որ մէկը թւեմ. Նրանց տարեգրութեան պատմութիւնը հարուստ է այդպիսի սև էջերով։ Նրանց գործած քաջագործութիւնների և Շուշում կատարած ընտրութիւնների մասին մանրամասն տեղեկութիւններ կարելի է գտնել Մարտիկի և Մ. Ղ.-ի երկար և բազմակողմանի կերպով լուսաբանված գեղեցիկ յօդուածներում (տես «Հոսանք» № 34, 1906 թ., և «Մուրճ» № 1, 1907 թ.)։

Պ. Բրինդարի գրութեան մէջ ծիծաղելի կէտեր շատ կան։ Այսպէս, նա ասում է, որ առհասարակ «Մշակի» և Ոսկու-Ջոնի յօդուածները ուղղված նրանց դէմ, իբր թէ, միշտ արհամարհում են և իսկի բանի տեղ էլ չեն դնում։ Այդ կատարեալ սուտ է, քանի որ «Մշակի» արտայայտած ամեն մի հեղինակաւոր և անաչառ միտք միշտ էլ զբաղեցրել է նրանց, որոնք ամենայն ուշադրութեամբ հետևում են «Մշակի» նրանց կաշուին վերաբերող ամեն մի տողին։ Մենք լռում ենք փաստերի առաջ, քաջութիւն ունեցէք հերքելու մեր ասածները։

Ինչ վերաբերում է պ. Բրինդարի մեզ տուած ատեստացիաներին, պէտք է ասեմ, որ ես նրանց կարօտ չեմ։ Բարեհաճեցէք այդ ատեստացիաները պահել ձեզ համար և տալ ձեզ նման գրչակ-համբակներին։

Պ. Բրինդար ի զուր է կարծում, «որ պ. Ոսկու-Ջոնը այս դէպքում էլ ըստ իր պատմական սովորութեան դուրս կը գայ հերքելու «Մշակի» № 189-ում զետեղած յօդուածը կամ առնուազն կը դադարի «հիւսիս նստել ու հարաւ բարբաջել»։ Այո, պէտք է նկատեմ, որ ես, 1903 թ. սկսած, գրել եմ «Տարազում», «Արշալոյսում» և չորրորդ տարին է ինչ աշխատակցում եմ «Մշակին», և չը նայած նրան, որ ես բազմաթիւ թղթակցութիւններ ու յօդուածներ եմ զետեղել այդ թերթերում, բայց և այնպէս մինչև օրս ես ոչ միայն չեմ հերքել իմ այս կամ այն թղթակցութեան որևէ կէտը, այլ և ոչ ոք առիթ և ցանկութիւն չէ ունեցել աննպատակ կերպով հերքելու մեր գրածները, ի բաց առեալ Ա. Մելքումեանը (տես «Ժամանակ» №№ 10, 11 և 12, 1907 թ.), պ. Արբենից (տես «Ժամանակ» №, 30 1907 թ.) և պ. Բրինդարից (տես «Վտակ» №№ 20 և 21, 1908 թ.)։ Եւ այս բոլորը այն պատճառով միայն, որ մեր խօսքը ուղղված է եղել նրանց դէմ, որ մենք քաղաքացիական արիութեամբ հրապարակական հաշիւ ենք պահանջել նրանցից։ Իսկ մեր այս տողերից յետոյ թող պարոնին չը զարմացնի, որ մենք «հիւսիս նստած ու հարաւ բարբաջելով» ենք զբաղված։ Մենք ոչ միայն Մոսկվայում նստած կարող ենք գրել մեր հայրենիքում կատարվող ծանօթ երևոյթների մասին, այլ Ամերիկայից անգամ կարող ենք գրել այդ մասին, եթէ, ի հարկէ, այդ երևոյթը ծանօթ է մեզ հետ։ Մենք ներկայ դէպքում այդպէս էլ վարվել ենք։ Հասկացէք, պարոններ, և մի անգամ ընդմիշտ ի նկատի ունեցէք, որ մենք առաջնորդվում ենք «ոչինչ, բացի ճշմարտութիւնից» նշանաբանով։

Եւ այս բոլորից յետոյ, պ. Բրինդար, մեզ թւում է ոչ միայն չը հերքել «Մշակի» № 189-ում մեր գրածները, այլ մի անգամ ևս վաւերացնել և հաստատել մեր ասածները. և քանի որ պ. Մելիքեանի (տես «Մշակ» №№ 6 և 10, 1908 թ.) և Բրինդարի գրութիւնների (տես «Վտակ» № 20 և 21, 1908 թ.) մէջ բաւարար փաստեր չը գտանք մեր պահանջների մասին, ուստի, ներկայ տողերով, վերջին անգամ դիմում եմ Աշոտ եպիսկոպոսին և պահանջում պատասխանել հետևեալ հարցերին.

1) Ի՞նչ շարժառիթներ և պատճառներ հիմք ծառայեցին ձեզ, Աշոտ եպիսկոպոս, փակելու դպրոցի վերջին երկու դասարանն և աշակերտներին փողոց նետելու։

2) Ի՞նչ իրաւունքով դուք, Աշոտ եպիսկոպոս, դպրոցի բիւջէն հասցրիք Շուշու թեմական դպրոցի համար մի չը տեսնված՝ 20 հազար րուբ. գումարի և ինչ իրաւունքով, այդպիսի մի գումար ծախսելով հանդերձ, դպրոցը լցրիք մի խումբ դպրոցաւարտ երեխայ-ուսուցիչներով։

3) Ի՞նչ վերանորոգումների է ենթարկվել դպրոցը, ինչի մասին է ձեր ագենտի խօսքը։ Մենք որքան գիտենք, Շուշու թեմական դպրոցի հսկայական երկու շէնքերը, մանաւանդ նոր փառահեղ շէնքը, ուր գտնվում են համարեա թէ բոլոր դասարանները, ոչ մի վերանորոգութեան կարօտ չեն։ Եւ եթէ յիրաւի դպրոցի շէնքերի վերանորոգումներ եղել են, ինչու չէք բարեհաճում մանրամասն հաշիւ տալու հասարակութեանը։

Եւ եթէ, մեր ներկայ տողերը լոյս տեսնելուց մինչև 10 օրը, Աշոտ եպիսկոպոսը չը բարեհաճի փաստալից կերպով պատասխանել մեր առաջադրած հարցերին, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք ասելու, որ Աշոտ եպիսկոպոսը հրաժարվում է և խուսափում է հրապարակական խօսքից և որ նրա լռութիւնը համաձայնութեան նշան կը լինի մեր այն մտքերի հետ, որ մենք արտայայտել և արտայայտում ենք «Մշակում»։

Մենք սպասում ենք ընթերցող հասարակութեան հետ...

Ոսկու-Ջոն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՑ

◆ Զմիւռնիացի դերասան Մազմանեան, որ երկու տարի առաջ Պարիզի կօնսերվաթուարէն ողբերգական դերասանի առաջին մրցանակը ստացաւ և որուն լուսանկարը տեսնուեցաւ պարիզեան պատկերազարդ հանդէսներու և լրագիրներու մէջ, ժամանակ մը Սարա Բեռնարի և այլ ծանօթ դերասաններու հետ ֆրանսական գաւառներու մէջ արուեստագիտական պտոյտներ ընելէ յետոյ, վերջերս Պարիզ վերադառնալով Սարա Բեռնարի թատրոնին մէջ ստանձնած է կատարել «Կամէլիազարդ Տիկնոջ» Դիւվալ հօր դերը։ Պէտք է գիտնալ թէ, մանաւանդ Պարիզի մէջ, այդպիսի դժուարին դեր մը միայն հսկայ տաղանդները կը յանդգնին ստանձնել։ Պ. Մազմանեան ապահովապէս մէկն է այն հայ տաղանդներէն, որոնց վրայ Եւրոպայի գեղարուեստական աշխարհը հիացումով կը խօսի։ Պ. Մազմանեանին վերապահուած է մեծ ապագայ, և դեռ 26 տարեկան է միայն։ («Լոյս»)

◆ «Gaulois» կը ծանուցանէ թէ Գաֆֆր աբբան Եգիպտոս իր վերջին ուղևորութեան միջոցին գիւտ մը ըրած է, որ ամենաբարձր կարևորութիւն ունի Սրբազան Պատմութեան համար և որ մեծապէս կը հետաքրքրէ մեզ հայերս։ Վերին Եգիպտոսի դեռ այնքան բազմաթիւ նախկին ղպտի գիւղերէն մէկուն մէջ, ուր գոյութիւն ունին Ալէքսանդրիոյ և Գաղկեդոնի ժողովներուն յաջորդող տարրերէն մնացած հնօրեայ եկեղեցիներուն մնացորդները, Գաֆր աբբան՝ վիթի մորթի վրա գրուած ձեռագիր մըն է գտեր ութերորդ դարու մնացորդ՝ երեք և կէս մէթր երկայնութեամբ և 6 սանտիմէթր լայնութեամբ, կատարելապէս անեղծ անվթար, որուն բացատրութիւնը մագաղաթին կռնակին վրա գրուած է մասամբ արաբերէն, Փիլիպ Ալէքսանդր աբեղային կողմէ, 1405-ին, և որ ցոյց կուտայ, թէ այդ ձեռագիրը, որ փաթթի մը մէջ պահուած է, իբրև յուռութք (թըլըսմ) գործածուած է։ Քանի չափ նրբանուրբ մանրանկարներ կը պարունակէ և յունական տառերով կը պատմէ պատմութիւնը Քրիստոսի այն պատկերին զոր Յիսուս ինքն իսկ ղրկեց Եդեսիա, հայոց Աբգար թագաւորին։

«Այս դօքիւմանը,—կըսէ «Gaulois»,— անհերքելի կերպով կը հաստատէ ճշմարտութիւնը թէզին, զոր Գաֆֆր աբբան պաշտպանեց «Քրիստոսի կենդանագիրները» անունով իր գրքին մէջ, թէ Քրիստոսի բոլոր պատկերները այդ առաջին պատմական կենդանագիրէն առնուած են»։

ՍԵՊՈՒՀԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հազարաւորների թւին մէկն էլ աւելացաւ Արաբկիրցի Երուանդ Քօսեեան—Սեպուհ—որ էջմիածնի Գէորգեան ճեմարանի դասական մասն էր աւարտել, երեք տարի առաջ թողնելով Արամեան դպրոցում իր ուսուցչական պաշտօնը ձմեռվայ բուք ու բորանին երկիր մտաւ՝ այդ բուք ու բորանի, արիւն արցունքի, ցաւ ու տառապանքի կլասիք հայրենիքը։

Համեստ կազմակերպութեան համեստ ներկայացուցիչն էր նա։ Այն կազմակերպութեան, որ անվախ Աւետիսեաններ ծնել կարողացաւ...

Դժբաղդ էր Սեպուհը. Նա չարժանացաւ Աւետիսեանի բաղդին, անակնկալի, դժբաղդ պատահարի զոհ դարձաւ՝ շնորհիւ «յեղափոխական» դհերցի Դաւթի դաւաճանութեան։

«Գաղափարը չի մահանար՝ նայած որքան իրերի տրամաբանական եզրակացութիւնն է այն»—այսպէս էիր ասել քո ընկերներին ուղղած վերջին կոչը. այդ գաղափարի անձնուէր զինուորն էիր դու, որ թողնելով հանգիստ կեանքը, արդիւնաւէտ պաշտօնը, հայրենի փուշ ու տատասկը կոխեցիր։ Հայրենի հողը երեւ դարձեալ արեան ծարաւի էր զգում։ Հողն էլ փափկեց, ժայռերն էլ կակղեցին. բայց հայ նահատակների արիւնը չը կարողացաւ կակղեցնել քրիստոնեայ դիպլօմատների կորդացած սրտերը, հայ գաւառների, լալկան ժայռերի ճիչն ու աղաղակը չը կարողացան արթնացնել «քրիստոնեայ», «մարդասէր» յողդողդվող վեհապետների քնած (թէ՞ մեռած) խիղճերը...

Թող քո արեան ցօղն էլ իջնէ այդ «սրտերի», այդ «խղճերի» վրա։

Եթէ «գաղափարը չի մահանար», հաւատանք, որ մի օր կը փափկին «սրտերը», կարթնանան «խղճերը»։

Այդ օրը կը բոլորենք հայրենի ծոցում հանգչող շիրմիդ շուրջը, կը ցօղենք գերեզմանդ մեր գոհութեան, երախտագիտութեան արցունքով և կը կրկնենք քո խօսքերը՝ «գաղափարը չի մահանար», աւելացնելով մերը՝ «գաղափարի զինւորը՝ երբէք»։

Իմօ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, 8 ապրիլի

Զիլլի Սուլթանի այստեղից հեռացվելուց յետոյ մինչև այժմ այստեղ և շրջակայքում տեղի ունեցած փոքրիկ ընդհարումները և սարքված ցոյցերը զանազան խնդիրների վերաբերմամբ եթէ ուզենանք թւել և նկարագրել՝ էջեր պէտք է գրել։ Այսքանը միայն կասենք, որ համարեա թէ ամեն դէպքում երբ վտանգ էր սպառնում ազգաբնակութեան, Սպահանի ամենամեծ և ամենահռչակաւոր աղաները—Աղա Նաջաֆի և Աղա Չէյխ Նորոլլա եղբայրները— միջամտել են և կռւող կամ վիճող կողմերը հաշտեցրել, խաղաղացրել են, այնպէս որ օրվայ ամենանշանաւոր մարդիկը նրանք են. ուրախալի է մանաւանդ, որ այս խառն ժամանակներում նրանք միշտ լաւ են վերաբերվել քրիստոնեաների հետ ընդհանրապէս և հայերի հետ մասնաւորապէս։ Անհամաձայնութիւն զանազան դասակարգերի և կուսակցութիւնների մէջ անպակաս է եղել, սակայն շնորհիւ յիշեալ աղաների ազդու միջամտութեան խնդիրները վճռվել են խաղաղութեամբ և առանց արիւնհեղութեան։

Լսում ենք՝ Զիլլի Սուլթանը Ֆարսի նահանգապետ է նշանակվել և արդէն մեկնել է Թեհրանից իր նոր պաշտօնավայրը երթալու համար. այստեղ սպասվում է այս երկու օրերս։

Նոր-Ջուղայի ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի հիմնադրութեան 50 տարին լրանում է այս տարի։ Լսում ենք՝ առաջ. փոխանորդ գեր. Բագրատ վարդապետ Վարդազարեանը, ազգային երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը և ուսուցչական կազմը մտադիր են տօնել այդ յոբելեանը բաւական շքեղ կերպով և աշխատում են այդ առիթով հանգանակութեամբ կազմել մի «անձեռնմխելի դրամագլուխ» նոյն դպրոցի անունով, որովհետև այդ դպրոցի դրամագլուխը շատ աննշան է և անհամապատասխան աւելացող ծախքերի և անհրաժեշտ պէտքերի հետ. լսում ենք՝ արդէն կազմվել է մի յանձնախումբ, յոբելեանի օրը նշանակվել է մայիսի 25-ին։ Հոգաբարձութիւնը մասնաւոր նամակներով և տպված կոչերով դիմել է Հնդկաստանում և Ջուղայում բնակվող Նոր-Ջուղայեցի հարուստներին և բարեգործներին։ Յոյս ունենք, որ մեր բարեգործները՝ ի նկատի ունենալով Պարսկաստանի ամենահին հայկական օրիորդաց դպրոցի մատուցած ծառայութիւնը և կարևորութիւնը մեր վերածնութեան գործում չեն զլանայ իրանց նիւթական և բարոյական աջակցութիւնը նոյն դպրոցը հաստատուն հիմքերի վրա դնելու համար։ Մաղթում ենք նախաձեռնողներին կատարեալ աջողութիւն։

Մեր թեմի առաջնորդ սրբազան Սահակ արքեպ. Այվազեան չորս տարի Հնդկաստան և Ջուղա շրջագայելուց յետոյ Եգիպտոսի վրայով գնում է Էջմիածին և, ինչպէս լսում ենք, մտադիր է Թեհրանի վրայով վերադառնալ իր աթոռը։ Յոյս ունենք, որ առաջնորդի այսքան տարիների շրջագայութիւնը իր տարագիր հօտի մէջ պսակված կը լինի կատարեալ աջողութեամբ և նրա ներկայացրած տեղեկագիրը բազմակողմանի և նպաստաւոր պիտի լինի այստեղի ազգային-կրօնական-կրթական և բարեգործական հաստատութիւնների համար։

Նոր-Ջուղայեցի

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

I

Ուստր, 14 ապրիլի (ն. տ.)

Ողբացեալ մեծանուն գրագէտ Արփիար Արփիարեանի և եղբայրասպանութեան բոլոր հայ զոհերու յիշատակին սարքուած սգահանդէսին մէջ քուէարկուած հետևեալ ուղերձագիրը՝ խնդրեմ հրատարակել «Մշակի» առաջիկայ թւի մէջ։

---

*) Տես «Մշակ» № 94

Սգահանդէսի կարգադիր յանձնախումբին կողմէ՝

Մաղաք Գ. Գէրպէքեան

Որոշմնագիր

Ուսարի երկսեռ հայութիւնը, ապրիլ 12-ի կիրակին հաւաքուած ս. Փրկիչ եկեղեցւոյ ազգ. ժողովարանը, ողբացեալ մեծանուն գրագէտ Արփիար Արփիարեանի և եղբայրասպանութեան բոլոր հայ զոհերու ի յիշատակ սարքուած սգահանդէսին, հետևեալ բանաձևը քուէարկեց։

ա. Նկատելով որ՝ վերջին քանի մը տարիներու ընթացքին մէջ, յեղափոխութեան նուիրական ու պաշտելի անունի տակ, կարգ մը եղբայրասպանութիւններ տեղի ունեցան կուսակցութիւններու ոմանց կողմէ ընդհանրապէս, և ծանօթ ոճրագործ խմբակի մը կողմէ մասնաւորապէս, որուն նորագոյն զոհը ողբացեալ Արփիարեանն եղաւ իր գիտցած ու հասկցած ճշմարտութիւններն հրապարակած ըլլալուն համար։

բ. Նկատելով որ՝ նոյն յեղափոխութիւն անունին տակ ծանօթ ոճրագործ խմբակը ազատութեան կարմիր ու անարատ դրօշը եղբայրասպան արիւնով ներկեց, երկու գլխաւոր անարգ նպատակաւ, սպաննելով հարուստը՝ անոր հարստութեանը տիրանալու համար, սպաննելով գրագէտը՝ անոր գրչէն ելած ազատական գաղափարներն ոչնչացնելու և իրենց շահատակութիւնները անվախ ու համարձակ յառաջ տանելու համար։

գ. Նկատելով որ հէնց նոյն պատճառներով մութին մէջ գործող Սև Ձեռքը վայրագաբար խլեց հայութեան ծոցէն քանի մը թանկագին կեանքեր, ազգային յայտնի բարերար Ունճեան մը և յայտնի վաճառական Թավշանճեան մը, մեծ ու անզուգական գրագէտ մը Արփիար Արփիարեան, գրագէտ մը՝ որ վերջին երեսուն տարիներու հայ օրագրութեան ռահվիրան ու յանդուգն յառաջապահն եղած էր, որու վաղահաս մահուամբ վերջացաւ շարքը հրապարակագրութեան այն բեղուն արտադրութեանց, որոնք հայ միտքն ու հոգին յեղաշրջեցին այնքան երկար ժամանակ։

Որոշեց՝

ա. Արտայայտել բուռն ցասում և արդար զայրոյթ Արփիարեանը սպաննող ոճրագործ խմբակին դէմ մասնաւորապէս և բոլոր այն ամէն կուսակցականներուն դէմ ընդհանրապէս, որոնք եղբայրասպանութիւնը կիրարկեցին հայ ազգին մէջ և որուն դեռ կը յամենան քաջալեր հանդիսանալ։

բ. Արտայայտել խորին ցաւակցութիւն ողբացեալ Արփիարեանի եղերական մահուան առթիւ, որ գիտակից և անձուրաց զինուորի մը պէս ինկաւ գաղափարի կռուադաշտին վրայ, եղեռնագործներու գնդակէն, ինչպէս նաև ցաւակցութիւն յայտնել եղբայրասպանութեան բոլոր հայ զոհերուն, նահատակ իրենց ազատ մտածումներուն ու գաղափարներուն։

գ. Ժողովուրդի արդար ու անաչառ դատաստանին յանձնել Արփիարեանի ոճրագործներուն այս սև ու նողկալի արարքը, ու թողուլ որ ան (ժողովուրդը) իր բարոյական ապտակն իջեցնէ եղեռնագործներուն երեսին, ընդմիշտ անիծելով, արտաքսելով իր մէջէն այդպիսիները ու ամէն անոնք, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով յարաբերութիւն կը մշակեն անոնց հետ։

II

Փրովիդէնս, 24 ապրիլ (ն. տ.)

Հայրիկի մահուանէն յետոյ հայութիւնը փութկոտ գործունէութիւն մը ցոյց տուաւ, իր մեծ հայրենասէր հայրապետին անունը անմահացնելու համար։

Ամերիկահայութիւնն ալ իր պարտականութեան մէջ թերացած չըլլալու համար՝ հետևեցաւ այդ համազգային շարժման. տեղ-տեղ եղան հանգանակութիւններ, երբ դեռ խնդիրը թարմ էր։ Այժմ այդ հանգանակութեանց արդիւնքը կը մնայ այս ու այն անձանց մօտ, անորոշութեան մէջ, ինչպէս որ նպատակն ալ դեռ անորոշ կը մնայ. ոմանք կուզեն Վանի ժառանգաւորաց վարժարանին ղրկել, բայց ուրիշներ ալ կըսեն, թէ Թիւրք կառավարութիւնը հաշտ աչքով չպիտի դիտէ այդ, ուրեմն պէտք է ուրիշ տեղ ղրկել։ Ոմանք ալ կըսեն, թէ Թիֆլիս կազմուած յանձնախմբին պէտք է ղրկել։ Այսպէս՝ հետզհետէ այդ գումարները, թէև էապէս փոքր, բայց քար գայթակղութեան կը սկսին դառնալ. հիմա ալ ջանքեր կըլլան Բոստոն՝ կեդր. յանձնախումբ մը կազմելու համար, պատգամաւորական ժողովի մը միջոցաւ, ուր պիտի որոշուի նաև ղրկուելիք տեղը։ Այդ գումարի կէսն ալ անշուշտ գումարուելիք ժողովին համար կը ծախսուի։

Միթէ զարմանալի ժողովուրդ չենք հայերս։

Շըժղունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՆԳԼԻԱ

Յուզմունքներ Հնդկաստանում. — Յուզմունքները Հնդկաստանում օր ըստ օրէ աւելի ու աւելի են լուրջ բնաւորութիւն ստանում, և ապստամբված հնդկական ցեղերին ճնշելու համար, «Times» լրագրի կարծիքով, պահանջվում են ընդարձակ զինուորական գործողութիւններ, որոնց ղեկավարութիւնը ներկայումս գտնվում է գեներալ Վիլկոկսի ձեռքում։

Ապստամբութեան շրջանը առայժմ սահմանափակվում է Աւղանստանի սահմանի և Փանջգարա գետի միջև ընկած տարածութեամբ, սակայն յուզումները արդէն բռնկել են Բաջարի շրջանը և գետափնեայ մասերը։ Ապստամբութիւնը սաստկանում է հրդեհի նման՝ մոլլաների մոլեռանդ քարոզների ազդեցութեամբ, և հնդկական մամուլը դառնապէս տրտնջում է, որ հնդիկները չափազանց շուտ մոռացութեան տուին այն դասը, որ տրված էր նրանց 10 տարի առաջ։

Դրութիւնը մանաւանդ բարդանում է նրանով, որ ապստամբները զէնքեր և օգնական ուժեր են ստանում Աւղանստանից, և նրանց շարքերում պատերազմողների մէջ քիչ չեն այնուամենայնիւ էմիրի հպատակները, որոնք, չը նայելով նրա պաշտօնեաների հակառակութեան, մեծ թւով անցնում են սահմանը, գետը և միանում ապստամբ մահմեդականներին։ Էմիրը կամ տեղեկութիւն չունի իւրերի դրութեան մասին, կամ անզօր է խանգարել այդ, կամ թէ գիտութեամբ մատների արանքով է նայում այդ բոլորին, նեղացած այն բանից, որ Ռուսաստանը և Անգլիան, առանց իրան հարցնելու, դաշինք են կապել իրար հետ Աւղանստանի վերաբերմամբ, և ուրախանալով Անգլիային զայրացնելու հնարաւորութիւնից, առանց լուրջ կոնֆլիկտ ունենալու նրա հետ։

Ինչ էլ որ լինի՝ խրախուսված աւղանցիների աջակցութիւնից՝ մոլլաները սրբազան պատերազմ են քարոզում գեաուրների դէմ։ Իսկ կատաղած մահմադները փորձ արեցին պաշարել անգլիական բանակը Շաբգակրի մօտ, որի հետևանքը այն եղաւ, որ անգլիացիները ճակատամարտում կորցրին 60 սպանվածներ, չը հաշւելով վիրաւորվածներին։

Լոնդոնի մամուլը ապստամբութիւնը համարում է լուրջ և յոյս չէ տածում, որ կաջողվի շուտով վերջ տալ նրան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

4 մայիսի

ՄՈՍԿՎԱ։ Բացվեց աւտոմոբիլների միջազգային ցուցահանդէսը։ Ցոյց են դրված արտասահմանեան ֆիրմաների 100-ից աւելի աւտոմոբիլներ։

ԳՐՈԶՆԻ։ Բացվեց Տէրսկի շրջանի նաւթարդիւնաբերողների տասներկուերորդ արտակարգ համագումարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բագուի նաւթարդիւնաբերողների հերթական համագումարը առևտրի մինիստրի առաջ միջնորդութիւն է յարուցել, որ ընդհանուր կարիքների համար իւրաքանչիւր պուդ նաւթից կէս կոպէկ տուրքի ստանալը շարունակվի կրկին 3 տարով։

5 մայիսի

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ։ Բախչիսարայում տօնվեց Ռուսաստանի առաջին թուրքական «Թէրջիման» լրագրի քսան հինգամեակը։ Յոբելեանի առիթով զանազան տեղերում հաստատվել են գրադարաններ և դպրոցներ։ Հանդէսին ներկայ էին մօտ 5000 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առաւօտեան ժամը 10-ին ժամանեց սպանիական արքայորդի Ֆերնանդօն։ Երեկոյեան ժամը 4-ին նա ընդունվեց Թագաւոր Կայսրից Ցարսկոյէ Սելոյի Ալեքսանդրովսկի պալատում։ Ապա Մեծ դահլիճում Նորին Մեծութիւնների մօտ ի պատիւ Ֆերնանդօյի կայացաւ շքեղ հացկերոյթ։

Արտաքին

4 մայիսի

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների պալատը որոշեց զինւորական գործերի մասնաժողովին յանձնել Լանտվէրի նորակոչ զինւորների թիւը մեծացնելու օրինագիծը։

ԼՈՆԴՈՆ։ «Թայմսին» հաղորդում են Պեկինից, որ եապոնական դեսպան Հայաշին հեռացաւ Պեկինից։ Ամենայն հաւանականութեամբ նա կը նշանակվի Վիէննայի դեսպան Ուչիդի փոխարէն, որը կը տեղափոխվի Բերլին։

ՓԱՐԻԶ։ Բոլոր համայնքներում, բացառութեամբ Սէնի նահանգի, քաղաքային ընտրութիւններին յաղթանակը տարան հանրապետականները։

Գեներալ Լիօտէն նշանակված է ալժիր-մարոկկեան սահմանագլխի գլխաւոր կոմիսար. նա ենթարկվելու է Ալժիրի գեներալ-նահանգապետին և Տանժէրի ֆրանսիական միսսիային։

ԼՈՆԴՈՆ։ Րէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ պաշտօնական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, ֆրանսիական առևտրի մինիստր Կրիւպպի Լոնդոնում եղած ժամանակ, անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների միջև բանակցութիւններ են վարվել անգլօ-ֆրանսիական առևտրական պայմանագիր կապելու հարցի վերաբերեալ։

ԼՈՆԴՈՆ։ Անգլիական գայլուկագործութեան յետագայ անկման առաջն առնելու նպատակով, բազմամարդ ժողովում վճռվեց 40 շիլլինգ մաքս նշանակել արտասահմանից ներմուծվող գայլուկի համար։

5 մայիսի

ՀՌՈՄ։ Արդարադատութեան մինիստրի նախահաշիւը քննելու ժամանակ պատգամաւորների պալատը ընդունեց հերթական գործերին անցնելու բանաձևը, որով առաջարկում է կառավարութեան՝ հարկ[illegible] միջոցներ ձեռք առնել միջազգային կոնֆերենցիա գումարելու [illegible] բռնութեան ամբաստանութեան օրէնսդրութիւնները միացնելու և ուսումնասիրելու նպատակով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
մեկնեց Պեատիգորսկ (Կովկ. հանք. ջրերը)։
Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.
10—1

ԲԺԻՇԿ
Ա. Միհրարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սոլոլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—44

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
Հիւանդների
Պեատիգորսկում, Վերին բուլվար № 14. տ. Իշխ. Գիրէյի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей.
30—1

ԱԴՕԼՖ ՌՈՒԴԷ
Ժողովրդական դպրոցի
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թւաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. Ձեռնարկների ձեռնարկային ճշմարտութիւններ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Կազմված՝ 1 ր. 90 կ.
Դիմել Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ". Г. И. Галустяну.
Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի։
(չ. ու. ե.) 10—2

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Գինացուցակները ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К°
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—22

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը նշանակած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ՍՐԱԳ	ՍՐԱԳԱՑՎԱԾ	ՓՈՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից գուրս գալը	—	4 ժ. 10 ր. գիշ.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից գուրս գալը	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից գուրս գալը	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից գուրս գալը	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ.)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից գուրս գալը	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից գուրս գալը	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալեքսանդրոպոլից գուրս գալը	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից գուրս գալը	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալեքսանդրոպոլ հասնելը	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալեքսանդրոպոլից գուրս գալը	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

Երեքշաբթի, մայիսի 6-ին
ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԱՅԳՈՒՄ
կը կայանայ
ՄԵԾ
ԶԲՕՍԱՆՔ
Թիֆլիսի բոլոր գիմնազիաների թոշակազուրկ և չքաւոր աշակերտուհիների համար Մանգլիսում հիմնվելիք ամառնային գաղութի օգտին։ Երկու խումբ երաժշտութիւն։ Փոխարքայի կօզակների երգեցիկ խումբը։ Սինեմատոգրաֆ։ Մանկական խաղեր պ. Լուկեչի ղեկավարութեամբ։
Հնդկական Ֆակիրների
հրաշագործութիւնները
Ցոյց կը տայ Պեկինից եկած չինացին։
Օդապարիկներ, լուսաւորող շատրուան, վիճակախաղ-ալլեգրի, բուֆետներ, ծաղիկներ, կոնֆետտի, գուշակութիւն և այլն։ Այգին զարդարված կը լինի դրօշակներով, ծաղկաշղթաներով, կիօսկներով, պատկերներով։
Ելեկտրական լուսաւորութիւն և հրախաղութիւն
Զբօսանքի սկիզբն է ցերեկվայ ժամը 2-ին։
Մուտքը 25 կ.։ Մանուկների և աշակերտների համար 15 կ.։
Զբօսանքի կարգադրիչ՝ տ. Զ. Ն. Ռուդոլֆ
(ե.) 1—1

ՀՐԱՒԷՐ
Ս. Էջմիածնի սինօդի հրամանի համաձայն և Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ, Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու 25 տարին լրացած արական սեռի բոլոր ծխականները հրաւիրվում են շնորհ բերել մայիսի 11-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, նոյն եկեղեցում ընտրելու երեք երեսփոխ-պատուիրակներ, որոնք միւս եկեղեցու պատուիրակների հետ գումարվելով առաջնորդարանում, սեպտեմբերի 21-ին ընտրելու են մէկ պատգամաւոր Վրաստանի Թեմի կողմից ս. Էջմիածնում կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու համար։
Ստեփանոս ա. ք. Սամուէլեան
(ե. ու. շ.) 3—1

Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեծարգոյ անդամներին կիրակի, մայիսի 11-ին, առաւօտեան ժամը 11-ին շնորհ բերել ընկերութեան արհեստանոցը, (Գանովսկայա № 19) ընդհանուր ժողովի՝ անշարժ կայք առնելու մասին վերջնական որոշում կայացնելու։
(ե. կ.) 2—1

Լոյս տեսաւ
Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Іоаннесу Іоаннисіану.
(օ.մ.) 10—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամէն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—62

K 100
SOUFRE SUBLIME
A. BOUDE & FILS
MARSEILLE
LES PLUS HAUTES RÉCOMPENSES
Վազերի ժժկութեան
համար
ԱՄԵՆԱԼԱՒ
Ծծումբը
(ՔՕՔՈՒՐՏ)
է
Աշխարհահռչակ
ՄԱՐՍԷՅԼԻ
„ԲՈՒԴ"
գործարանի ծծումբը
(Զը կորցնէք պարկի նկարը՝ որ չը սխալվէք)
Գնամավով գնողներին [illegible] առաջարկում է Կ. Կ. ՕՋԻԱՆԴԻԼԸ Թիֆլիս, Բեբուտովսկայա փողոց, № 33.

Լոյս տեսաւ
„ԾԻԾԱՂԱԲԵՐ"
Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Մոլլա-Նասր-Էդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։
182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն—անեկդոտներ, 112 երես, գինը՝ 20 կոպէկ։
Դիմել գրավաճառներին։ Ինձնից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին։ Մշտական հասցէս՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(չ. ու. կ) 10—7

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
հրաւիրում է ներկայ մայիսի 12-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նրանց, որոնք կը ցանկանան վերցնել նախկին Ի. Ա. Թայիրովի կալուածքի վերանորոգութիւնը, Թիֆլիսում, 8-րդ քաղաքամաս, Պէսկովսկայա փողոցում։
Մանրամասն նախահաշիւը և պայմանները կարելի է տեսնել ընկերութեան վարչութեան մէջ, ամէն օր, ցերեկվայ ժամը 10—2-ը։
1—1

ԹԻՖԼԻՍԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ցանկանալով ամառվայ ամիսներում բանալ իր արհեստանոցի ճիւղը
ԳԻՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ
դիմում է հասարակութեանը, խնդրելով դրամական աջակցութիւն այդ դիտաւորութիւնը իրագործելու համար։
Նպաստները հասցնել տնայնագործական ընկերութեան վարչութեան կամ «Մշակի» խմբագրութեան։

Первая Международная
Автомобильная выставка
въ Московскомъ
Городскомъ Манежѣ
съ 3го по 20ое Мая
Циркул. высыл. по требов. безплатно.
Справ. Хамовники домъ Жиро.
1900
Московское отдѣленіе
Россійское автомобильное общество
1903
1908
Р.А.О.М.О.
(22, 25, 30, մ. 6,)
117521
4—4

Типографія „[illegible]" [illegible]

[illegible] № 3.